այրի, պէտք է առաջ գնդասեղով մը վառօդին հատիկները մորթին մէջէն հանել, ետքը պաղ ջրի մէջ խոթել։

Երբոր այրած տեղը բշտի, պաղ ջրի մէջ դնելէն ետքը պէտք է գնդասեղով մը ծակել, որպէս զի մէջի հիւթը վազէ. ետքը վրան բարակ լաթ դնելու է մոմոտած, կամ վրան թարմ ու անոյշ կարագ կամ ձէթ քսած։

Բոլոր են պարզ ու դիւրին դեղերը երբոր մէկուն մարմինը այրի. բայց երբոր այրուքը սաստիկ է, պէտք չէ անհոգ ըլլալ բժիշկ կանչելու։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կիկերոն։

ԲՐԻՍԱՐՏՈՒՍ վրայ ատեն ատեն երևցած մեծամեծ մարդիկը ինչ ազգէ որ ըլլան՝ անոր իրաւունքնէ մեծ պատիւ կրնան, բայց իրենց քիչուո-

ղութեանը համար իրաւունք կունենան կամ ամէն ազգի ու ամէն աշխարհքի պարծանք սեպուելու, և կամ իրենք միայն մէկտեղ՝ զատ ազգ մը կամ ցեղ մը համարուելու, հասարակ մարդիկներէն վեր ու գերազանց։ Այսպիսի կարգէ դուրս մարդիկներէն մէկն էր Մարկոս Տուղղիոս Կիկերոն, Հռովմայեցւոց լեզուին զարդարողը, և մարդկային Ճարտասանութեան օրինակն ու պարծանքը։ Քրիստոսէ 106 տարի առաջ ծնաւ Կիկերոն Հռոմ քաղքին մօտերը, ու միայն իրեն արդիւնքովը թէ ուսմանց և թէ իշխանութեանց մէջ շատ առաջ երթալէն ետքը, երբոր Հռովմայեցւոց տերութիւնը Հոկտաւիոս, Անտոնիոս ու Լեպիդոս անուանով երեսպետներուն ձեռքը անցաւ, անոնց թշնամիներուն հետ Կիկերոն ալ թըրին բերանը գնաց 64 տարեկան։

Պլուտիկոս 'ի վեր խիստ ուսումնասէր էր կըսեն. Հռոմին մէջ գտնուած երևելի վարպետներուն աշկերտը ըլլալէն ետև, իրեն ուսմունքը աւելի կատարելագործելու համար յունաստան անցաւ, որ ան ատենը խիստ ծաղկած էր։ Ամէն տեսակ ուսման ձեռք զարկաւ, և ամէնուն մէջ ալ անուանի եղաւ. Ճարտասանութեան կողմանէ Դեմոսթենէսին հաւասարեցաւ, ու գրեթէ գերազանցեց ալ. փիլիսոփայութեան կողմանէ Պղատոնին հասաւ, և թղթագրութեան ոճին կողմանէ յունաց ու Հռովմայեցւոց վարպետներէն ալ շատ վեր անցաւ։ Կիկերոնին փառքը անմահացընող գրուածքներն են իրեն Ճառերը, թղթերը, և Ճարտասանական ու փիլիսոփայական գրքերը։

Ճարտասանութենէ կողմանէ թէպէտ և Դեմոսթենէսին կրակը կամ կայծակը չունի, ինչպէս ինքն ալ կըզրուցէր, բայց նոր նոր գիւտերու և աղուոր դարձուածքներու կողմանէ անկէ ալ վեր է։ Ընտանեկան թղթերը առ Ատտիկոս, առ Բրուտոս, առ Կուինտոս, խիստ անուանի են՝ ոճին յստակութեանը, և ամէն կողմանէ շատ կատարելութեանցը համար։ Իրեն Ճարտասանական և փիլիսոփայական գրքերը կարդալու ատեն մարդ կըսքանչանայ վսեմութեանն ու պարզութեանը վրայ։

Յաղագս Պարադոքսիոյ ըսուած գիրքը խիստ անուանի է ուղիղ բարոյականին ու խելացի և յստակ ոճին համար. ասոր հայերէնը որ շատոնց թարգմանած է, յուսանք որ քիչ ատենէն կըտպուի։

---

## ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔ

Կոորած ապակիներն ու յախճապակէ անօթները կպցընելու սոսինձ։

ԹԻՒ մը մէջ գիր ունկի մը ձիւթ[1], ասոր՝ վրայ լեցուր այնչափ գինիի ու գիք[2] որ ձիւթը լուծի. ուրիշ ամանով լուծէ ունկի մը ձկան սոսինձ[3] պարզ ջրի մէջ։ Երբոր աս ձկան սոսինձը ջրին մէջ աղէկ մը կըկակըղնայ, գիր անիկայ ռոմի կամ ցքիի մէջ, որպէս զի լուծուի ու թանձրանայ. ան ատեն մէջը աւելցուր ունկի մը ամմոնիաքի խէժ՝ փոշի դարձած. աս երկու խառնուրդը, այսինքն ձիւթն ու ձկան սոսինձը լեցուր հողէ ամանի մը մէջ, ու չափաւոր ջերմութեամբ դիր։ Երբոր աս ամէն նիւթերը կըմիանան ու բոլորը մէկ զանգուած կամ հեղուկ մը կըդառնայ, դիր մէկ շիշի մը մէջ ու բերանը ամուր մը գոցէ։ Երբոր կուզես աս սոսնձէն գործածել, առ շիշը՝ տաք ջրի մէջ դիր, ու ան ապակէ կամ յախճապակէ նիւթերն ալ որ կուզես կպցընել՝ տաքցուր։ Աղէկ կըլլայ որ կպցընելն ետքը 12 ժամի չափ ան կտորները մէկմէկու հետ կպած կենան՝ ինչուան որ սոսինձը չորնայ. անկէ ետքը ան կպած տեղն ալ չկոտրած տեղերուն պէս ամուր կըմնայ։

1 Սոփըռ։
2 Ալքոոլ, թբարկօղի։
3 Պուլըդ Բուլիֆուլը։